

# Օրհնէ ձիան / Orhne dzian

Գնայուն

**Allegretto**



Օրհ - նէ \_\_\_\_\_ ձի - ան \_\_\_\_\_ օրհ - նէ \_\_\_\_\_ Քրիս - տոս,  
Orh - ne \_\_\_\_\_ dzi - an \_\_\_\_\_ orh - ne \_\_\_\_\_ K'ris - tos,



օրհ - նէ \_\_\_\_\_ ձի - ան \_\_\_\_\_ օրհ - նէ \_\_\_\_\_ Քրիս - տոս:  
orh - ne \_\_\_\_\_ dzi - an \_\_\_\_\_ orh - ne \_\_\_\_\_ K'ris - tos.

Թագվորահոր օրհնությունով  
Թագվորամոր օրհնությունով  
Հայրապետաց օրհնությունով  
Օրհնյալ ծառս նոր կանգնեցավ  
Խաչն էլ գլխին արդ բազմեցավ  
Քաղցր սրբտով զարդարեցավ  
Աննամանության հոտ բուրեցավ:

T'ak'vorahor orhnut'yunov  
T'ak'voramor orhnut'yunov  
Hayrapetats' orhnut'yunov  
Orhnyal tsarrəs nor kangnets'av  
Khach'n el gəlkhin ard bazmets'av  
K'akhts'er sərtov zart'arets'av  
Annmanut'yan hot burets'av.

Սուրբ օրհնություն տարածվեցավ  
Թշնամու սիրտ քաղցրացավ  
Բարի հրամեք թագավորին  
Բարի հրամեք կնքահայրեր  
Օրհնէ ձիան օրհնէ Քրիստոս:

Surp' orhnut'yun taratsvets'av  
T'əshnamu sirt k'akhts'rats'av  
Bari hramek' t'ak'avorin  
Bari hramek' kənk'ahayrer  
Orhne dzian orhne K'ristos.

Այն ո՞վ էր որ առաջ օրհնեց  
Յուր սուրբ սրտովը նորոգեց  
Ամուսնության կապըն օրհնեց  
Աճել ու շատնալ հրամայեց  
Այն Աստված էր առաջ օրհնեց  
Յուր սուրբ սրտովը նորոգեց  
Ադամ Եվային պսակեց  
Աճել ու շատնալ հրամայեց  
Պսակատերն ո՞վ էղավ  
Նրանց քավորն ո՞վ էղավ  
Երգող պարողներն ո՞վ էղավ  
Հարսնիք անողն ո՞վ էղավ  
Պսակատեր Տերն էղավ  
Նրանց քավոր Գաբրիելն էղավ  
Երգող պարող հրեշտայք էղավ  
Հարսնատունը դրախտն էղավ:

Ayn ov er vor arrach' orhnets'  
Yur surp' sərtovə norok'ets'  
Amusnut'yan kapən orhnets'  
Achel u shatnal hramayets'  
Ayn Astvats er arrach' orhnets'  
Yur surp' sərtovə norok'ets'  
Adam Yevayin pəsakets'  
Achel u shatnal hramayets'  
Pəsakatern ov yeghav  
Nərants' k'avorn ov yeghav  
Yerk'ogh paroghner'n ov yeghav  
Harsnik' anoghn ov yeghav  
Pəsakater Tern yeghav  
Nərants' k'avor Gap'rieln yeghav  
Yerk'ogh parogh hreshtayk' yeghav  
Harsnatunə dərakhtn yeghav.